



## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-104-ԱՌ-30  
2023թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Դատավորների գործունեության գնահատման համակարգում բարեփոխումներ իրականացնելու նպատակով դատավորների գործունեության գնահատման համակարգին վերաբերող օրենսդրության վերլուծության, միջազգային փորձի ուսումնասիրության և դատավորների գործունեության գնահատման համակարգի կատարելագործման ուղղությամբ համապատասխան առաջարկությունների մշակման համար ձևավորել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 21  
ք. Երևան

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

### Դատավորների գործունեության գնահատման համակարգում բարեփոխումներ իրականացնելու նպատակով աշխատանքային խմբի

- Անի Մխիթարյան - Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր (խմբի ղեկավար)
- Արման Թովմասյան - Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր
- Մխիթար Պապոյան - Վերաքննիչ քրեական դատարանի նախագահ
- Նորա Կարապետյան - Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր
- Կարեն Զարիկյան - Վարչական դատարանի դատավոր
- Ջոն Հայրապետյան - Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր
- Դանիել Մխեյան - Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր
- Արուս Հայրապետյան – Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ